№ 155 Օգոստոսի 21 (Սեպտեմբերի 2) 1881 Օգոստոսի 21 (Սեպտեմբերի 2) № 155

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція ‹Мшакъ›

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կալուածական խնդիր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Քութայիսից. Նամակ Շուշուց. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Իտալիա. Աւստրո-Ունգարիա. Ամերիկա. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից:

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐ

„Մշակի" № 153 մէջ տպվեցաւ Ա. Քալանթարի մի բանասիրական յօդուած կալուածական խնդրի առիթով: Յօդուածագիրը շատ ուղիղ է ասում որ այժմ, երբ վճռվում է կալուածական խնդիրը Երևանեան նահանգում, մենք ոչինչ հաստատ և դրական նիւթ չունենք մեր գիւղացիների և կալուածատէրերի տնտեսական յարաբերութիւնների մասին, առհասարակ թէ մեր հին և թէ նոր կալուածական ձևերի մասին, այնպէս որ մամուլը անկարող է քննադատել հարցը և իր վճիռը տալ այդ հարցի մասին:

Ինչքան մենք յորդորում էինք մեր թղթակիցներին հաղորդել մեզ կալուածական խնդրի մասին նիւթեր,—մինչև այժմ մեր ջանքերը ոչինչ հետևանքի չը հասան: Բացի մէկ պատահական և անկատար թղթակցութիւնից Երևանեան հողային հարցի մասին, մենք ուրիշ ոչ մի թղթակցութիւն չը ստացանք:

Իրանք գիւղացիները, ի հարկէ, անկարող են գրել, յայտնել իրանց մտքերը, բացատրել հարցը և պաշտպանել մամուլի միջոցով իրանց շահերը. Բայց ի՞նչ պէտք է ասենք Երևանի ինտելլիգենցիայի մասին.... Որքա՞ն ուսում առած կալուածատէրեր, որքան բարձր ուսում ստացած իրաւաբաններ, ադվոկատներ, պաշտօնեաներ կան Երևանում.... Մի՞թէ նրանցից ոչ մինը, տեսնելով որ „Մշակը" հետաքրքրվում է այդ հարցով, չէր կարող հաղորդել մեզ ճիշդ տեղեկութիւններ մեր կալուածական խնդրի մասին:

Երկուսից մէկ. կամ նրանք իրանք որոշ կերպով չեն ուսումնասիրել և իրանք չեն հասկանում կալուածական խնդիրը, ուրեմն ամաչում են խոստովանել իրանց այդ տգիտութիւնը, կամ նրանց մէջ տիրում է կատարեալ ապատիա, անտարբերութիւն դէպի ամեն հասարակական խնդիրներ:

Մենք խօսք չենք գտնում մեր ինտելլիգենցիայի այդ յանցաւոր անտարբերութիւնը իր յատուկ բառով դրօշմելու համար, նոյն իսկ այն ժամանակ երբ վճռվում է մեր գիւղական դասի տնտեսական գոյութեան մահվան և կեանքի խնդիրը, որից կախված է նրա և մեր երկրի ամբողջ ապագան:

Մենք կրկնում ենք որ „Մշակի" № 100 մէջ տպված Երևանի թղթակցութիւնը, որ յետոյ արտատպվեցաւ ամբողջութեամբ „Кавказъ" լրագրում և Մոսկվայի „Русскій Курьеръ" լրագրի № 166 մէջ, շատ անկատար էր և կարող էր խոշոր սխալներ ունենալ, բայց լրացած լինելով այն հարցերով, որ դնում է այժմ մեր լրագրի № 153 մէջ պ. Քալանթար, այդ թղթակցութիւնը և նրա առիթով մեր գրված առաջնորդող յօդուածները № 100 և 101 մէջ, դարձեալ կարող էին ծառայել մեր թղթակիցներին որպէս մի պրօգրամ կալուածական խնդրի վրա աւելի մանրամասն և ճիշդ տեղեկութիւններ մեզ հաղորդելու համար: Թող հաղորդած տեղեկութիւնները միակողմանի լինէին, թող նրանք հաղորդված լինէին գործի մէջ հետաքրքրված մի կողմից, այն է կալուածատէրերից,—փոյթ չէ, մենք կը կարողանայինք մեր եզրակացութիւնները դուրս բերել ստացած նիւթերից:

Մեզանում տիրում է այնպիսի սարսափելի ապատիա, այնպիսի անտարբերութիւն դէպի ամեն հասարակական խնդիր, որ մինչև անգամ գործի մէջ անմիջապէս հետաքրքրված և շահ ունեցող անձինք չը գիտեն, գլանում են պաշտպանել իրանց շահերը: Մի թուրք կալուածատիրոջ, մի որ և է Արաս-Կուլի-խանին Երևանեան նահանգում ներելի է չը դիմել հայ լրագրին ամբողջ երկրի համար կենսական խնդիրը մամուլի միջոցով վիճաբանված և վճռված տեսնել ուզենալու համար, բայց մի բարձր ուսում ստացած հայ կալուածատիրոջ կողմից այդ տեսակ յանցաւոր անտարբերութիւնը աններելի է: Մեզանում բիւրօկրատական ոգին այն աստիճան խոր արմատներ է գցել իւրաքանչիւր մարդու մէջ, որ ոչ ոքի մէջ այլ ևս չէ մնացել հասարակական համերաշխութեան զգացմունք, ոչ ոք չէ մտածում ընդհանուր դրութեան վրա, այլ իւրաքանչիւրը մտածում է՝ " ես մի կերպ կազատեմ իմ կալուածների մի մասը, կառավարութեանը խնդիրներ, աղերսագրեր տալով, իմ գործի մասին հոգալով, իսկ մնացածների, իմ հարևանների դրութիւնը ինչ կը լինի, ինձ ի՞նչ փոյթ:"

Կրկին դիմում ենք Երևանի նահանգի մեր հայ ինտելլիգենցիային, մեր բարձր ուսում ստացած, մանաւանդ իրաւաբանութեան մէջ մասնագէտներին և խնդրում ենք նրանց մեծ ուշադրութեամբ կարդալ գոնէ „Մշակի" 100, 101, 153 համարները, ուսումնասիրել այդ համարներում տպված յօդուածները կալուածական խնդրի առիթով և հաղորդել մեզ ճիշդ տեղեկութիւններ այդ խնդրի մասին:

Կան րօպէներ ազգերի պատմութեան մէջ, երբ որ անտարբերութիւնը դէպի հասարակական շահերը և հասարակական խնդիրները ամենամեծ յանցանք պէտք է համարվի, մանաւանդ լուսաւորված դասակարգի կողմից:

Եթէ հասարակական ծանր րօպէներում բարձր, համալսարանական ուսում ստացածը չը պէտք է ջոկվի իր եսականութեամբ, իր անտարբերութեամբ, իր փորի վրա միմիայն մտածելով, կամ վերջապէս իր ագիտութեամբ և դարդակ թղթախաղի մէջ իր օրերը անցնելով՝ մի որ և է ագէտ հաստափորից,—այն ժամանակ ինչի՞ն է պէտք մեզ բարձր, համալսարանական ուսումը. Այդ տեսակ ուսում մի գրօշ չարժէ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

Օգոստոսի 18-ին

Վերջին ժամանակներս Քութայիսում սաստիկ շատացաւ զէնքի հարուածով մարդասպա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 9 օգոստոսի

Մինչև մի մխիթարական փոփոխութիւն տեղի ունենալը հայոց գործերի մէջ, առաջ ընկաւ այն տխուր իրողութիւնը, որի մասին անցեալ անգամ գրեցի—այդ Սիսի կաթուղիկոսի բաժանվիլն է Կ. Պօլսի պատրիարքի իրաւասութիւնից. Ուրեմն Ներսէս պատրիարքը այսուհետև էլ իրաւունք չունէ խօսելու Եւրօպայի և Թիւրքիայի առաջին յանուն բոլոր տաճկահայերի, որոնց գրեթէ մեծ մասը, Փոքր Հայաստանի և Կիլիկիայի հայերը, անցնում են Սիսի կաթողիկոսի իրաւասութեան տակ. քիչ խոչնդոտներ կար հայոց գործի դէմ, մէկն էլ հիմայ դուրս եկաւ.... Բայց ո՞վ է մեղաւոր այս իրաւամբ մեծ ամբաստանութեան մէջ. Սայիդ-փաշան, Սիսի կաթուղիկոսը—թող փաստերը խօսեն. Ամբողջ ինը ամիս է, որ Սիսի կաթուղիկոսը Կ. Պօլիս եկած աղաչում է Կ. Պօլսի հայոց ազգային ժողովից ուշադրութեան առնել իր պահանջները և որ և իցէ բաւարարութիւն տալ նորան. այդ պահանջները ի հարկէ նիւթական էին, որոնք կայանում են նախ կաթուղիկոսի աթոռի չը գիտեմ քանի հազար ղրուշ պարտքի մէջ, երկրորդ՝ Այնթաբի մէջ մի արուեստանոց հիմնելում, որով կարելի լինի փոքր ի շատէ ջլատել ամերիկացոց և անգլիացոց միսիօնարների յաջողութիւնը, որոնք փոխանակ Կ. Պօլսի զեվզեկների նման «լօյս» պառալու, սուս ու փուս զանազան տեսակ տեղական արհեստներ և արուեստներ են զարգացնում Կիլիկիայում, և հազարներով որսում ոչ միայն դեռահաս աշակերտներ, այլ և ամբողջ ընտանիքներ.

Այս ինն ամսուայ մէջ, ասում եմ, ազգային ժողովը փոխանակ աշխատելու որ և է կերպով, գործով կամ վստահելի և երաշխաւորեալ խոստումով, հանգստացնելու Սիսի կաթուղիկոսին, վերաբերվել է միայն թուղթերի բարձրութիւնից, յանձնարարելով այս «թիւրիմացութիւնը» կրօնական խորհրդի առեանին. կրօնական խորհուրդը ի հարկէ, ինչպէս և բոլոր ուրիշ խորհուրդները, ինչպէս դատական, ելևմտական, ուսումնական և այլն, համարելով իրան մինիստրութիւն, որով միմեանց մէջ և ասվում է ministére des cultes, ministère de la justice, ministère das finances, ministère de l'instruction publique և այլն, զբաղվելով, ասում եմ, լոկ այսպիսի կապկական օյիններով, ազգային ժողովի ministère des cultes ոչինչ ուշադրութիւն չէ դարձրել Սիսի կաթուղիկոսի ըստիպողական և կարևոր պահանջներին. ընդհակառակը այդ խեղկատակ ministère-ը, այնպիսի անտարբերութիւն և արհամարհանք է ցոյց տուել, որ կաթուղիկոսը էլ չը կարողանալով ուրիշ կերպ իր վիրաւորված պատիւը պաշտպանել, քանիցս եկեղեցիներում բորբոքված քարոզներ է խօսել, յարձակվելով ժողովի թուլութեան և անտարբերութեան վրա դէպի ազգային գործերը. Այստեղ ևս դարձեալ փոխանակ հասկանալու և բաւարարութիւն տալու, արհամարհանքով վիրաւորված կրօնական մարդու դիւրազգացութեան, հասնողը աշխատել է միայն ղրուշական մամուլի միջոցով աւելի ևս խայթել և վիրաւորել կաթուղիկոսի անձնական և կրօնական պատիւը. Այսպիսի ստոր վարմունքներից և բռնած ուղղութիւնից յետ, էլ ինչ ելք կարող էր մնալ Սիսի կաթուղիկոսին բացի այն, որ վեր կենալ գնալ Սայիդ-փաշայի մօտ ասելու «տուէք ինձ բարաթ առանձին և Կ. Պօլսի ազգային ժողովից անկախ իրաւասութեան». Կոյրին ինչ է հարկաւոր —երկու աչք, ասում է առածը. Սայիդն էլ հէնց այդպիսի երկպառակութեան էր կարօտ, որով իսկոյն և եթ յանձնեց կաթուղիկոսին նորա ուզած հրամանագիրը.

Ազգային ժողովի այս ինը ամսուայ մէջ բռնած թոյլ և ապիկար ընթացքը որչափ և իցէ փոխել տալու մէջ, Ներսէս պատրիարքը, ի հարկէ, բոլորովին անկարող էր, որովհետև ինչպէս սահմանադրական հաստատութեան (որը եթէ Աստուած մի օր առաջ անիծէր, վաղուց արդէն մեծ բարիք արած կը լինէր հայոց ազգին) գլուխ, չունէ ոչինչ իրաւունք առանց կրօնական խորհրդի քուէարկութեանց որ և է մի բան անել նորա որոշելիքի հետ. մանաւանդ որ այս միջոցներս ինքը պատրիարքը, ինչպէս ձեզ արդէն յայտնի է, այնչափ էր զզուած ազգային ժողովի սներես ministère-ներից, որ ինքն էր ուզում ձեռք քաշել իր պաշտօնից.

Այսպէս ուրեմն, երբ ազգային ժողովի բռնած զզուելի ընթացքի շնորհիւ տեղի ունեցաւ մի այսչափ զգալի անպատուութիւն, ամենքն էլ վեր կը կենան կասեն միայն, թէ «կաթողիկոսը կաշառված է» «դաւաճան է» և այլն և այլն. ինչ և է նա, բայց մինչև ինը ամիս նա չէր աղաչում ազգային ժողովին վերջ տալ իր գործին, որովհետև ծեր և հիւանդ լինելով չէ կարող տանել Կ. Պօլսի օդը և երկար ապրել այստեղ. Ո՞ւմ մեղքն է հիմայ, «կաշառի», «դաւաճանութեան» թէ Կ. Պօլսի ազգային ժողովի մէջ նստած իդիոտ soi-disant մինիստրների...

Ոչ պակաս հետաքրքիր է թէ ինչ էր շինում այս բոլոր ժամանակ Կ. Պօլսի հայ մամուլը. հիմ, նա մեծ բաներով էր պարապված, նա Գամբեթայի ճառերն էր արտատպում և Վիկտոր Հիւգոյի համար Ֆրանսիայում կանգնացնելի արձանի հարցերով էր զբաղված. իսկ ազգային ժողովի պարտաւորութեանց և թուլութեանց վրա նա չէր համարձակվի խօսել և մի բառ անգամ ասել, որովհետև կարող էր մի կամ երկու բաժանորդներ կորցնել. Ահա ձեզ, ինչ ասել Կ. Պօլիսը, ինչպէս հայոց գլխաւոր մտաւոր կենտրօն իր տպարաններով, եօթը լրագիրներով, ազգային ժողովով, մինիստրներով, դիպլօմատներով և այլն. Այդ բոլորը չունէ ոչ թէ Թիֆլիսի մի հատ ինտելլիգէնտի մտաւոր և բարոյական ուժը և ամբողջութիւնը, այլ նա աւելի ստոր է նաև, քան թէ Ախալցխայի դումայի մէջ նստած մկոների խումբը. այդ խումբը հարիւր անգամ աւելի գործունեայ է, հայրենասէր, օգտաբեր, ազատ և անկախ, քան թէ Կ. Պօլսի բոլոր «մեծապատիւ» մուրացկան խմբագիրները, գեռնաքարշ էֆէնդիները և տիրացու դիպլօմատները. այս ամենը վերոյիշեալ ցաւալի եղելութիւնը չէ, միայն որ հաստատում է, այլ ևս շատ ուրիշ բաներ.

Օրինակ. սովը երբ սկսվեց Հայաստանում, տաճկահայ մամուլը երկու-երեք ամիս ռուսահայերից յետ միայն արժան համարեց մի քանի խօսք ասել նորա համար, ինչպէս ուշադրութեան հազիւ արժանի մի բանի վրա. Մասիսի համարները վկայ են դորա. և այս ոչ թէ նորա համար էր, որ սոքա երկու ամիս մեզնից աւելի ուշ լուր ստացան Հայաստանից ամեն օր եկող հարիւրաւոր մարդիկներից, քաւ լիցի, այլ սոքա զբաղված էին այդ ժամանակ ևս «աքանչելի Ֆրանսայի» գործերով. Վերջապէս սովը այստեղ ևս յայտնի եղաւ եւրօպական մամուլի շնորհիւ.

նութիւն։ Ամսիս 8-ին սպանվեցաւ մի դաշոյնի հարուածով պ. Կ. Մղերեանց, քաղաքից 8 վերստ հեռաւորութեամբ. չանցած դեռ ես մի շաբաթ նոյն վիճակին ենթարկվեցաւ մի կառապան իմերել քաղաքիս կենտրոնում գիշերվայ ժամի 10-ն։ Երկու մարդասպաններն էլ իմերելներ են, գործը յանձնված է քննիչին։ Ցանկալի կը լինէր որ տեղական ոստիկանութիւնը ազատէ մեզ այսպիսի զզուելի դէպքերից և իր հսկողութիւնը եռապատկէ։

Մի զարմանալի և ամօթալի դիպուած կը պատմեմ որպէս զի ընթերցողը աւելի լաւ գաղափար կազմէ տեղացոց կոպիտ և գազանական բնաւորութեան վրա։ Նորերումս քաղաքում պատահում է հետևեալ բան. մի գիւղացի սայլով բերում է փայտ և կանգնում է սովորական տեղը, փողոցի վրա։ Տան տէրը հրամայում է հեռացնել սայլը իր տան առջևից, խեղճ գիւղացին ուշացնում է այդ բանը, այն ժամանակ համարձակ տանտէրը դուրս է բերում ատրճանակ և արձակում է եզի վրա. կենդանին իսկոյն արիւնի մէջ շաղախված գետնի վրա է ընկնում, իսկ ողորմելի գիւղացին սկսում է լալ։ Սատկած եզը տանում են ոստիկանատուն։ Տեսարանը կատարվեցաւ ոստիկանատան դիմաց։

Շտապում եմ յայտնել ի գիտութիւն հայ ընթերցողաց, որ Քութայիսում շնորհիւ հայր Նաբալեանցի արդէն վերացվեցաւ այն վնասակար և խեղճ ժողովրդի տունը քանդող սովորութիւնը, որ անուանվում է քելեխը։ Ինչպէս պատմում են բաւականի յաջողութիւն է ունեցել այդ նորութիւնը, ցանկալի է որ միւս հայաբնակ քաղաքներ էլ օրինակ առնեն մեզանից։ Եթէ որ ննջեցեալի տէրը կարողութիւն ունի, քելեխի մէջ գործ դնվելի որ և է մասը նուիրում է աւելի սուրբ բանի, այն է ուսումնարաններին։

Յ. Ամիրաղեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

12-ին օգոստոսի

Օրերումս ձայն էր տարածվել մեր քաղաքում թէ տեսուչ Ս. Մանդինեանի տեղ նշանակվում է պ. Ղ. Աղայեանց։ Կարապետ վարդապետը առանց հոգաբարձութեան իմանալու հեռագրում է Էջմիածին Անդրէաս եպիսկոպոսին թէ մեր հոգաբարձուները համաձայն չեն Աղայեանցի տեսչութեան, իսկ երբ տեսնում է որ այդ լուրը համակրելի եղաւ հոգաբարձութեան կողմից կամ գուցէ շուտով էլ իրագործվի, նաև որ այս բանի մէջ իր նախանձութիւնը յայտնի է դարձել ամենքին, կրկին հեռագրում է Էջմիածին թէ այն լուրը բոլորովին ինքը չէ հաղորդել, ընդհակառակ ինքը շատ ուրախ կը լինի Աղայեանցի ընտրվելով։

Չենք իմանում Կարապետ վարդապետի այս նախանձութիւնը իսկ Աղայեանցի պէս մի փորձառու մարդու համար է, թէ դպրոցների վերականգնելուն համար։

Կարմրուկ և սկարլատինա հիւանդութիւնները դեռ շարունակվում են մեր քաղաքում, մանաւանդ Թուրքաց բաժնում. չը կայ օր, որ երկու կամ երեք երեխայ զոհ չը գնան այդ համաճարակ հիւանդութիւններին։

Անցեալ երկուշաբաթ գիշերը ժամը մէկին այստեղ պատահում է երկրաշարժ. քաղաքիս Թուրքերը դուրս են փախչում տներից սաստիկ աղաղակ բարձրացնելով, թէ այն գուշակողը սըխալվել է այս գիշերը պիտի վերջանայ աշխարհս, բարեբաղդաբար շուտով երկրաշարժը վերջանում է, իսկ խեղճ Թուրքերից շատերը ամբողջ գիշերը անց են կացնում դրսում, սպասելով աստղերի թափվելուն և միւս գուշական նշաններուն, բայց ի զուր է անցնում այդ ամենը, ոչինչ չէ պատահում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Պիատիգորսկ, 17-ին օգոստոսի

Վեց տարի է, որ ես սիֆիլիտական ցաւով նեղվում էի. բժիշկներին շատ փող էի տուել, և հնար չէր լինում ինձ, այդ ցաւից ազատվելու։ Վերջապէս, պատահեցաւ Պիատիգորսկում մի հայ երիտասարդ, Վերին-Ագուլիսից եկած, որը այստեղ, ժամանակաւորապէս, վաճառականութեամբ էր պարապում։ Այս երիտասարդի հետ ծանօթանալով այս ամառը, իմացայ, որ իմ ունեցած ցաւի բժշկելը գիտէ։ Վասնորոյ առաջարկեցի ինձ էլ բժշկելու։ Ամենահեշտ կերպով, ընտանեկան միջոցներով բժշկեց ինձ և ստացաւ ինձանից որպէս վարձատրութիւն 25 րուբլի։ Ինձ բժշկող երիտասարդի անունն է՝ Յակոբ Գասպարեան Բալեանց։

Սահակ Կօկճաեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս 20 օգոստոսի

Յարգոյ խմբագիր. Կարդալով ձեր պատուելի լրագրի 153 համարի մէջ թղթակցութիւն Կիսլավոդսկից, որտեղից ուղարկված էր ձեզ 1 րուբլի ազգօգուտ նպատակաւ, այն է ի նպաստ Վահրամ եպիսկոպոս Մանկունու հօր արձան կանգնեցնելու, ես ևս սաստիկ համակրելով այդպիսի մի ազգօգուտ ձեռնարկութեան, շտապում եմ ուղարկել ձեզ ներփակեալ նամակաւ 1 րուբլի ի նպաստ այդ գործի։

Իմ կողմից ես կառաջարկէի այդ ձեռնարկութեան գլխաւորներին որ արձանը կանգնեցնել աւելի յարմար կը լինէր մեր բազմամարդ հայաբնակ քաղաքներից մէկի մէջ, օրինակ Թիֆլիսում։

Իսկ եթէ գործը որ և իցէ կերպով չիրագործվի, որ բոլորովին անհաւատալի է, այն ժամանակ խնդրեմ այդ 1 րուբլի հասցնէք «Միացեալ Ընկերութեան»։

Յակովբ Փիրալեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Петербургская Газета» լսել է որ բժիշկների շրջանում խօսակցութիւն կայ որ շուտով կառավարութիւնը թոյլ կը տայ արտասահմանում ուսում աւարտած ռուսահպատակ բժիշկներին պրակտիկայով պարապել Ռուսաստանում, առանց նորից հարցաքննութիւն տալու Ռուսաստանում։ Այդ լուրը մեծ աղմուկ է գցել բժիշկների շրջանում։

—

Լրագիրները լսել են որ եկող տարի պէտք է լինի Ռուսաստանում եկեղեցական ընդհանուր ժողով, որտեղ պէտք է վճռվեն ուղղափառ եկեղեցուն վերաբերեալ մի քանի կարևոր հարցեր։

—

Շնորհակալութեամբ ստացանք Թիֆլիսի ռէալական ուսումնարանի աշակերտներից հրատարակած Լոտօ, որի գինն է 50 կոպէկ և տպագրված է Յ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թւին։ Այդ Լոտոի վրա սովորական թւանշանների տեղ գործ են ածված հայոց այբբենարանի տառերը։ Այդ Լոտոն հրատարակված է մանուկների համար և նպատակ ունի վարժեցնել հայ մանուկներին հայոց այբբենարանի մէջ։ Վատ չէր լինի եթէ մեր լոտօ-խաղացող, հայերէն լեզու ատող հայ տիկիններն ու օրիորդներն էլ այդ լոտօ գործածէին։ Գոնէ այսպիսով կը սովորէին հայերէն կարդալ։ Լոտոն ծախվում է յօգուտ ռէալական դպրոցի հայ աշակերտների ապագայ գրադարանի։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Փորձ լեզուագիտական մի դրութեան» գրքոյկը, հեղինակութիւն Ս. Թադէոսեանի։ Տպված է Թիֆլիսում Յ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թւին և հրատարակված է Ա. Գրիգորեանից։ Գրքոյկի գինը 50 կոպէկ է։

—

Новости» լրագիրը հաղորդում է որ զանազան արտօնութիւններ, որոնք տրված են Ռուսաստանում բնակվող օտարազգի կոլոնիստներին, շուտով վերցրած կը լինեն օրէնսդրական ճանապարհով։

—

Լրագիրները լսել են որ գրքի հեղինակը, որ նորերումս հրատարակել է Լայպցիգում ռուսերէն լեզուով և որի վերնագիրն է «Նամակներ Ռուսաստանի ներկայ դրութեան մասին» գեներալ Ֆադէեվն է, որ առաջ ծառայում էր ռուսաց զինուորական ծառայութեան մէջ, յետոյ Եգիպտոսի խեդիվի մօտ փաշա էր դարձել, յետոյ ծառայում էր Սերբիայում և Չերնոգորիայում։ Նա պատկանում է սլաւեանոֆիլների կուսակցութեանը։

—

Այս օրերս հրատարակվել է Բերլինում ռուսերէն լեզուով մի գիրք «Что нужно» (ինչ է հարկաւոր) վերնագրով։ Գրքի հեղինակը, Գրիգորի դը-Վօլլան, խօսում է իր գրքի մէջ Ռուսաստանի ներկայ դրութեան մասին։

—

Ստացանք յօգուտ «Journal d'Orient» լրագրի հետևեալ փողերը. Դեմիրճեանցից 4 րուբլ, Գնդապետ Իւզբաշեանցից 4 ր., Յ. և Ն. Լալայեան եղբայրներից 8 րուբլ, «Մշակի» խմբագրութենից 8 րուբլ, Զաքարիա Գրիգորեանցից և Յարութիւն Շահազիզեանցից 8 րուբլ։ Ընդամենը 32 րուբլ։ Վերջին երկու պարոնները մեզ գրում են որ պատրաստ են նպաստել հայոց օրգանին, եթէ մինչև անգամ նրա համարները նրանց ձեռքը չը հասնին, այլ նրանք միայն այն համոզմունք կունենան որ լրագիրը հրատարակվում է և Եւրոպան կարդում է հայերի վրա յօդուածներ։ Մենք մեր կողմից, ամեն միջոց գործ կը դնենք ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին «Journal d'Orient» յօդուածների հետ և խնդրում ենք հայերին իրանց առատ նուէրներով նպաստել այդ լրագրի գոյութեանը։ Վերջապէս հայերը ունեն իրանց օրգան Եւրոպայում։ Պահպանենք նրան։

—

Մեզ հաստատապէս տեղեկացնում են որ սեպտեմբերին մեր քաղաքում լինելու հնագիտական ժողովին մասնակցելու է Բերլինի նշանաւոր

ինչ արեցին Կ. պոլսեցիք, ինչ տուեան նորա սովելոց իրանց «վսեմաշուքների» ձեռքով, որոնց մէջ այնպիսիները կան, որոնք մի ճնճին կապրիկի համար մինչև հիմայ ևս թիակներով ոսկի են շպրտում. այդ «վսեմաշուքները» հազիւ թէ մի քանի հարիւր ոսկի տուեան, այլ սովելոց յանձնաժողովը կազմվեց միայն գաւառացի հայերից, որոնց մինչև այդ ժամանակ արհամարելով Կ. պոլսեցիք միայն խմբուլ էին անուանում։ Երբ բանը նեղ տեղ հասաւ, երբ հարկաւոր եկաւ հայրենիքին մի իրական օգուտ հասցնել, յայտնվեց որ բոլոր գործ տեսնող մարդիկ լոկ խմբուլներից են բաղկացած, ինչպէս սովելոց մասնաժողովը այնպէս և բոլոր նուիրաբեր մարդիկ։ Իսկ իրանք Ասիէնի քաղաքակիցները շարունակում էին հողմարածութիւններ անել Վիկտոր Հիւգոյի և Լիտրէի վրա։ Եւ զարմանալին այն է, որ հարիւր անգամ համոզվելով, որ գործնական և արդիւնաբեր մարդ եթէ կան Կ. Պոլսի մէջ, բոլորն էլ գաւառներից նոր եկած մարդիկ են, Կ. Պոլսի ազգային ժողովը մինչև հիմայ ևս այդ մարդիկներին չէ ընդունում իր մէջ, վասնորոյ գործը այնտեղ է հասնում, որ Մուշի երեսփոխանը արդէն մի քանի տարի շարունակ Ստեփան Փափազեան ասված արարածն է, որը այս առաջնորդի, այն վարդապետի, եպիսկոպոսի վրա յարձակվելով կամ նորան անարժանապէս պաշտպանելով չորս-հինգ տարվայ մէջ կարողացաւ այդչափ հարստանալ, որ կարողացել է Պերայի մէջ երեք քարուկրեայ հոյակապ տներ շինել։ Մի մոռանաք, որ այդպիսի տներ շինող մարդը ոչինչ ուրիշ պարապմունք և մասնագիտութիւն չունէ, բացի ազգային ժողովի մէջ երեսփոխանի պաշտօն վարելը, իսկ մինչև երեսփոխան լինելը նա մի աղքատ վարժապետ էր, որ հազիւ կարողանում էր ամիսը 25 ր. ստանալ։ Տեսնելով հիմայ թէ իր երեք տները շատ են աչքի ընկնում, նա ամեն տեղ ասում է հիմայ թէ այդ տները իր կնկայ վրա ստացած «օժիտ» է, բայց զարմանալի է, որ այսպէս օժիտներ երեսփոխաններից շատերը ստանում են ոչ այն ժամանակ, որ ամուսնանում են, այլ այն ժամանակ, երբ մի կամ երկու տարի երեսփոխանի պաշտօն են կատարում ազգային ժողովի մէջ...

Կ. Պոլսի մէջ շատ տարիներ է, որ զանազան ընկերութիւններ են հաստատվել Կ. պոլսեցի երիտասարդներից, բայց ոչ մինը այդ ընկերութիւններից չէ կարողացել գոյութիւն ունենալ առանց գաւառացի երիտասարդների, որոնք երբ հեռացել են գործից, զզվելով իրանց ճառախօս դատարկաբան ընկերներից, իսկոյն այդ ընկերութիւնները քանդվել են։ Նոյնը չէ գուշակել տալի արդեօք Միացեալ ընկերութեան տնօրէն ժողովից երեք ամենագործ անդամների այս օրերս հրաժարվիլը՝ պ. պ. Կիւլպենկեանի և Մանուկեանի, որոնք կեսարացիք են և պ. Թօփալեանի, որը գիւրինցի մի գործնական մարդ է։ Ի՞նչ է պատճառը այս հրաժարման եթէ ոչ այն, որ այդ ողջամիտ և իրական արդիւնք փնտրող մարդիկը զզուել են իրանց պաշտօնակից ճառախօս Բերբերեան և ընկերութիւնից, որոնք երկար տարիներ միջնադարեան սխօլաստիկ վարժապետի դերը կատարելով Կ. Պոլսի մէջ, միայն շրջել են վերացական աշխարհում, ոտանաւորներ գրել, Վիրգիլի և Դանտէ թարգմանութիւնները կարդացել և Հայաստանի համար «լոյս» ևս «լոյս» աղաղակել....

Թէ ինչ ընթացք բռնեց Կ. Պոլսի մամուլը Ազարեանի ընտրութեան վերաբերութեամբ, այդ մասին արդէն մեզ յայտնի է, իսկ թէ մինչև որ աստիճան ստոր է Կ. Պոլսի հայ մամուլը առանց շահի և կաշառի ակնկալութեան, ոչինչ, մի տող անգամ գրել—ահա մեզ օրինակ Բեզուռթի գետնաշարժից յառաջացած սոսկալի հետևանքները. եթէ ինքներդ համոզվեցիք, ստանալով սոյն լրագիրները, թէ որը ինչ խօսեց այդ անբաղդութեան զոհերին օգնելու համար, մինչդեռ Վիկտոր «անմահն» Վիկտոր Հիւգոյի արձանի համար Մասիսի Բիւզանդ ասված տիրացու «պուբլիցիստը» էլ ժողովրդի գահլան տարաւ։

Հէնց այսօր եկան ինձ մօտ Սվազի վիլայեթից արդէն ամբողջ ամիս Կ. Պոլիս եկած պատուիրակները ռուսաց դեսպանատան աղերսագիր տալու համար Կովկաս գաղթելու դիտաւորութեամբ, կարդացիք արդեօք այս մասին մի բան այստեղի լրագրութեան մէջ. քաւ լիցի, ինչպէս կարելի է այնպիսի հարցերով զբաղվել Կ. Պոլսի հայ մամուլին, որոնք փարայ չեն կարող տալ։ Ահա փարայի խնդիրն է, որը ստիպում է լցնել տալ Կ. Պոլսի մամուլի էջերը միայն զանազան անվերջ գանգատներով առաջնորդների վրա. դիցուք հայոց կղերն էլ մի մեծ համակրութեան արժանի պտուղ չէ, բայց տարին տասն և երկու ամիս լցնել լրագիրների էջերը միայն այդպիսի հարցերով—այստեղ մի ուրիշ խորհուրդ կայ, որ փարայի խորհուրդն է։ Այսպիսի շահամոլ, ստոր և ցեխոտ ուղղութեան շնորհիւ, բանը հասել է հիմայ այնտեղ, որ Հայաստանի բոլոր ժողովուրդը մնացել է այժմ առանց առաջնորդների, որովհետև 65 առաջնորդներից մնացել են իրանց տեղերը միայն երկուսը, իսկ մնացածները էլ յոգնելով այս լրագրին այն լրագրին կաշառ ուղարկելուց, եկել են անձամբ խօսելու և բացատրութիւն տալու Ներսէս պատրիարքին. այո, յիրաւի երեք մարդին Թիւրքեան է կանչել տուել, այն է Սվազի, Մուշի և Արաբկիրի առաջնորդներին, իսկ մնացած 60 հոգին ինչ են շինում այստեղ։

Այս ամենից հետևում է այն, որ տաճկահայերի շահերը մեծ վտանգի մէջ են. Տէր մի արասցէ եթէ Ներսէս պատրիարքը յանկարծ մեռաւ, ինչպէս հեշտ է պատահել իւրաքանչիւր մահկանացուին, Հայաստանի ամբողջ ժողովուրդը կը մընայ կաշառակուռ, դրուշական, ստոր և ապիրատ երեսփոխանների և մամուլի յոյսով. ինչ կարող է դուրս գալ այդ ամենից դժուար չէ գուշակել—Հայաստանի ամբողջ ժողովուրդը կը գաղթի, կը հալվի ու կը կորչի իր վշտաբեր հողի երեսից, ինչպէս որ այդ անում են այժմ Սվազի մօտ 40 գիւղ հայ կաթոլիկ ազգաբնակութիւնը որոնց գլխաւոր յոյսը դրած է, ինչպէս իրանք ասեցին, Արգունի գաւառապետ պ. Միքայէլ Մէպսոնլի ոսկելից խոստումների վրա։ Միթէ պ. Մէպսոնը չը գիտէ թէ ռուսաց քաղաքականութեան և շահերին ձեռնտու չէ Հայաստանը հայերից զրկելը թէ կաթոլիկական «եղբայրսիրութիւն» է թելադրում նորան բանակցութիւններ վարել Սվազի բազմաթիւ հայ կաթոլիկների հետ։ Այս մասին մտադիր եմ վաղը հրապարակապէս, այստեղի լրագիրների միջոցով յիշեցնել Ազարեանին, յանձնելով Հայաստանից կորչող իւրաքանչիւր հայի կեանքը նորա խղճին...

Ուրեմն ահա ինչ է դրութիւնը այժմ, երբ Ներսէս պատրիարքին հարկաւոր էր եթէ ոչ նիւթական (որի վրա խօսք էլ չէ կարող լինել) գոնէ բարոյական խրախոյս Կ. Պոլսի ինտելլիգենցիայի կողմից, բայց այդ ինտելլիգենցիան տաճկաց մուղլիներից և կայմակամներից արդեօք մի բանով յետ է մնում...

Գրիգոր Նիկողոսեան